

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ ԿԱ պետական կառավարման
ակադեմիայի ասպիրանտ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴԻԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ուսումնասիրվում են ֆինանսական իրավախախտման էությունը, դրա առանձնահատկությունները, ինչպես նաև ընդհանուր տեսական հայեցակարգերի, որոշակի վերլուծությունների հիման վրա փորձ է արվել տալու ֆինանսաիրավական իրավախախտման ինքնուրույնությունը այլ տեսակի իրավախախտումների համեմատությամբ:

Հիմնաբառեր- իրավախախտում, ֆինանսական, հակաիրավական, հատկանիշ, մեղավոր, սանկցիա:

Ֆինանսաիրավական պատասխանատվության՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակի կարևոր հատկանիշներից մեկը դրա փաստացի հիմքն է՝ ֆինանսական իրավախախտումը:

Ինչպես օրենսդրության մեջ, այնպես էլ ֆինանսական կամ իրավաբանական գրականության մեջ¹ (որոշ բացառություններով) «ֆինանսական իրավախախտում» կատեգորիային բավարարուշադրություն դարձված չէ²: Այդ մասին խոսվում է մի շարք հեղինակների աշխատություններում³:

Չնայած ֆինանսական իրավունքի այնպիսի ինստիտուտ, ինչպիսին է «ֆինանսական իրավախախտումը», իրավախախտումների տեսակների դասակարգման համակարգում կայացած է, այնուամենայնիվ, իր բնույթով այն մինչ օրս հաճախ նույնականացվում է վարչական արարքի հետ⁴:

Պետք է փաստել, որ ֆինանսական բնույթի իրավախախտումների ինքնուրույնության հարցը բավականին կասկածների տեղիք է տալիս: Նշված խնդրի հաղթահարման դժվարությունները սերտ կապված են վարչաիրավական գիտության և պրակտիկայի՝ ֆինանսաիրավականի համեմատառավել կայացած դիրքերի հետ: Դա վերաբերում է իրավախախտումների տարանջատմանը և պատասխանատվության տեսակների դասակարգմանը, որոնց լուծման հարցում գերակայում է հանրային հարաբերություններում վարչական պատասխանատվության համընդհանրության վերաբերյալ ավանդորեն ձևավորված վստահությունը⁵:

Գրականության մեջ ֆինանսական իրավախախտման հասկացությունը տալու նպատակով բազմաթիվ փորձեր են արվել: Այսպես, Մ.Վ.Կարասևայի արդարացի ձևակերպմամբ, ֆինանսա-

կան իրավախախտումը մեղք գործելու արարք է, որը խախտում է ֆինանսական իրավունքի նորմերը, և որի համար ֆինանսական օրենսդրությամբ սահմանվում է ֆինանսաիրավական պատասխանատվություն⁶:

Ա.Ս.Յեմելյանովի և Ն.Ն.Չեռնոգորի կարծիքով ֆինանսական իրավախախտումը իրենից ներկայացնում է ֆինանսական օրենսդրական ակտերում պարունակվող կանոնները խախտող մեղավոր արարք, որի արդյունքում վնաս է հասցվում պետության ֆինանսական համակարգին, և նման արարքի կատարման համար մեղավոր անձի նկատմամբ կիրառվում է ֆինանսական սանկցիա⁷:

Օ.Է.Լեյստը նշում է. «ցանկացած իրավախախտում իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների համար վտանգավոր կամ մեղավոր և հակաիրավական արարք»⁸:

Կարծում ենք՝ ֆինանսական իրավախախտման սահմանումը տալու համար նախևառաջ պետք է պարզել, թե իրավախախտմանը բնորոշ հատկանիշներից որոնք են հենց դրան հատուկ:

Այն պնդումը, որ ցանկացած իրավախախտում հակաիրավական է, սակայն ոչ ցանկացած հակաիրավական արարք է, որ իրավախախտում է⁹, իրական է ֆինանսաիրավական կարգավորման ոլորտի համար ևս:

Ֆինանսական իրավունքում հակաիրավականության հատկանիշի բովանդակության հարցի կարգավորման համար անհրաժեշտ է նաև սահմանել, թե պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, կամ նորմի պահանջների չպահպանման հետ կապված ինչպիսի՞ արարքներն են հանդիսանում ֆինանսաիրավական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման համար

հիմք:

Նման խնդրի ուսումնասիրությունը քաղաքացիաիրավական տեսանկյունից իրականացվել է Դ.Օ.Տուգովի կողմից, որի արդյունքները լիովին հիմնավորված են: Մասնավորապես նա նշում է, որ այս կամ այն արարքի հակաիրավականության վերլուծության ժամանակ հաճախ միախառնվում է արարքի կատարման իրավաբանական պարտականությունը և հնարավոր իրավական արդյունքի հասնելու համար սահմանված կարգով գործելու անհրաժեշտությունը: Վերջինս համարվում է անհրաժեշտ պայման համապատասխան իրավական արդյունքի հասնելու համար: Օ.Է. Լեյստը նշում էր, որ ֆինանսական պատասխանատվության սանկցիաները ուղղված են իրավախախտումների դեմ, այլ ոչ թե այն գործողությունների դեմ, որոնց կատարումը թողնված է անձի նպատակահարմարությանը¹⁰:

Պետք է համաձայնել այն կարծիքներին, որ իրավաչափ և հակաիրավական վարքագծի միջև սահմանը պետք է դիտարկել այնտեղ, որտեղ սկսվում է պարտականությունների չարաշահումը: Հակաիրավականությունը դրսևորվում է միայն այնպիսի իրավական կարգավորումների հետ արարքի անհամապատասխանության դեպքում, որոնք սահմանում են արգելքներ կամ պոզիտիվ պարտականություններ, այսինքն՝ որոնց հետ անհամապատասխանությունը վնաս է հասցնում պահպանվող հասարակական հարաբերություններին¹²:

Այսպիսով, սուբյեկտի կողմից իր սուբյեկտիվ իրավունքների իրացման ընթացքում կատարված խախտումների հետ կապված գործողությունը կամ անգործությունը ֆինանսական իրավունքում հակաիրավականության ձևերին դասելու համար իրավունքի նորմում ամրագրված տեսական և գործնական հիմքեր չկան:

Իրավախախտման հաջորդ հատկանիշը արարքի հակաիրավականությունն է: Կարծում ենք՝ այս հատկանիշը բնորոշ է ֆինանսական իրավախախտմանը ևս: Հակաիրավականության հատկանիշը կայանում է նրանում, որ սուբյեկտը կատարում է ֆինանսական իրավունքի թվով արգելված արարք կամ չի կատարում ֆինանսաիրավական ակտով նախատեսված գործողություն: Ոչ հակաիրավական արարքը չի կարող լինել իրավախախտում և առաջացնել ֆինանսաիրավական պատասխանատվություն:

Պետք է համաձայնել հեղինակներից մեկի այն կարծիքին, համաձայն որի՝ հարկադրանքի կիրառումը թույլատրելի է միայն հակաիրավական վար-

քագծի պարագայում և առնչությամբ: Ոչ մի այլ պարագայում հարկադրանքի միջոցների կիրառումը հիմնավորված չէ¹³:

Հակաիրավականությունը, որպես այնպիսի խախտման էական բնութագրիչ, որը առաջացնում է հարկադրանքի միջոցի կիրառում, այնուամենայնիվ, իրավական տեսության մեջ չունի միանշանակ ընկալում: Այնուամենայնիվ, այս ասպեկտն ունի կարևոր ֆունկցիոնալ նշանակություն, քանի որ հակաիրավականության առկայությամբ կամ բացակայությամբ է որոշվում հարկադրանքի միջոցի կիրառման թույլատրելիությունը կամ անթույլատրելիությունը:

Այսպես, Վ.Ն. Կուդրյավցևայի կողմից հակաիրավականությունը կապվում է նրա հետ, որ անձը խախտում է պարտականությունը, որը դրված է նրա վրա իրավական ակտով¹⁴: Խ.Ի.Շվարցը հակաիրավական էր համարում այնպիսի արարքը, որը հակասում է օբյեկտիվ իրավունքին (օրենքին), միաժամանակ խախտում է տուժողի սուբյեկտիվ իրավունքները¹⁵: Օ.Ի.Իոֆֆեն հակաիրավական արարքների շարքին էր դասում օրենքով արգելված արարքները¹⁶:

Վ.Ֆ. Յակովլևը նշում է, որ քաղաքացիական իրավունքում հակաիրավական է ցանկացած վարքագիծ, որով անձը խախտում է մեկ այլ անձի սուբյեկտիվ իրավունքը՝ դրա համար իրավասու չլինելով օրենքով: Սակայն, մնան հակաիրավականությունը հարկադրանքի միջոցի կիրառման հիմք է միայն այն դեպքում, եթե այն առաջացրել է վնաս¹⁷:

Հեղինակներից ոմանք էլ նշում են, որ արարքը հակաիրավական է ճանաչվում քանի որ այն ամեն դեպքում չի համապատասխանում իրավունքի նորմի պահանջներին¹⁸:

Տարբեր կարծիքներ կան նաև հակաիրավականության վերաբերյալ՝ որպես ֆինանսական օրենսդրության խախտումների հատկանիշ: Որոշ հեղինակներ հակաիրավականությունը տեսնում են ֆինանսական օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների չկատարման մեջ: Այսպես, օրինակ, Ի.Ի Կուչերովան համարում է, որ եթե հարկատուն կամ այլ անձ, ով մասնակցում է հարկային հարաբերություններին, չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր վրա դրված պարտականությունները, այսինքն՝ խախտում է հարկային օրենսդրությունը, ասպա առաջանում է հարկադրանքի միջոց կիրառելու համար իրավական հիմք¹⁹:

Այլ հեղինակներ հակաիրավականությունը հասկանում են ավելի լայն՝ այն կապելով ոչ միայն պարտականությունների չկատարման, այլև իրավական նորմի այլ բնույթի խախտումների հետ:

Ֆինանսական իրավախախտումների հակաիրավականության հատկանիշը դիտարկում են նաև այլ հեղինակներ հարկային իրավախախտումների օրինակով: Այսպես, արարքի հակաիրավականությունը նշանակում է օրենսդրությամբ դրա կատարման ուղղակի արգելք կամ դրա իրականացումը նորմում սահմանված կարգի խախտմամբ: Անգործությունը հանդիսանում է հակաիրավական այն դեպքում, երբ ակտիվ գործողությունների պարտականությունը ուղղակիորեն սահմանվում է (հարկային) օրենսդրությամբ, սակայն անձը հրաժարվում է դրանք կատարելուց²⁰: Այսինքն՝ հեղինակը հակաիրավականությունը հասկանում է ոչ միայն որպես պարտականությունների չկատարումը, այլև տվյալ արարքի ձևի չպահպանումը:

Վերը շարադրվածը առաջացնում է հետևյալ հարցադրումը. արդյո՞ք բոլոր դեպքերում է իրավական նորմից շեղումը արարքը դարձնում հակաիրավական: Ե.Ե. Յակուշինան արդարացիորեն նկատում է, որ «հակաիրավականություն» հասկացությունը՝ որպես իրավունքի նորմի խախտում, բավականաչափ կոնկրետ չէ, քանզի իրավունքի նորմում նշված վարքագծի կանոններից ոչ բոլոր շեղումներն են համարվում խախտում²¹:

Օրինակ, կարծիք կա, որ մեղքի բացակայությունը բացառում է արարքի հակաիրավականությունը: Որոշ հեղինակներ չեն համաձայնում դրան՝ համարելով, որ իրավական նորմից շեղումը սուբյեկտը ոչ միայն կարող է գիտակցել, այլև կարող է կանխատեսել դրա բացասական հետևանքների առաջացումը: Եթե իրավահարաբերությունների սուբյեկտի գործողությունը կամ անգործությունն անհրաժեշտության դեպքում հանգեցրել է գիտակցված հետևանքի, կամ չեն կանխել մեծան հետևանքը, ապա մեծան գործողությունները (անգործությունները) կլինեն մեղավոր: Նման արդյունքը հենց դիտավորությամբ կամ անզուշտությամբ կատարված գործողության կամ սուբյեկտի մեղքից անկախ կատարված գործողության հետևանք է²²:

Թվում է, թե մեղքի բացակայությունը, իրոք, չի բացառում հակաիրավականությունը, բայց ոչ թե այնպես, ինչպես համարում է հեղինակը: Այն այսպես թե այնպես առկա է, քանզի անձը իր արարքի հանդեպ ունենում է որևէ հոգեբանական վերաբերմունք: Հարցը նրանում է, թե կատարված արարքի նկատմամբ բացասական հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է արդյոք դրա պարզումը, կամ արդյոք բոլոր դեպքերում է անհրաժեշտ դրա պարզումը, թե՛ ոչ:

Մեր կարծիքով, իրավաբանական պատասխանատվության ենթարկելու համար մեղքի առկա-

յությունը նշանակություն ունի այնքանով, որքանով յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատել յուրովի: Դրա մասին է վկայում նաև օրենսդրի այն մոտեցումը, որ, օրինակ, ապառքի և տույժի գանձումը հարկային իրավահարաբերություններում իրականացվում է առանց հարկատուի մեղքի սահմանման: Այս միջոցները նպատակ չունեն պատժելու. դրանք միայն պետք է ապահովեն խախտված հանրային-իրավական գույքային շահերի վերականգնումը: Հիմնավորված է այն համոզմունքը, որ «ֆինանսական բնույթի հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել նաև մինչև իրավախախտման կատարումը...: Գոյություն ունեն այնպիսի հարկադրանքի միջոցներ, որոնք ուղղված են ֆինանսական կարգուկանոնի գործող խախտումների դարբեցմանը, ինչպես նաև ֆինանսական սանկցիաների կիրառման համար պայմանների ստեղծմանը: Պարզ է, որ մեծան միջոցների կիրառումը, ի տարբերություն ֆինանսաիրավական պատասխանատվության միջոցների, կապված չեն սուբյեկտի արարքում ֆինանսական իրավախախտման հատկանիշների կազմի հաստատման հետ»²³:

Ֆինանսական օրենսդրության վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ մեղքը ամրագրված չէ որպես իրավախախտման հատկանիշ: Ա.Ս. Եմելյանովը իր աշխատություններում եզրակացություն է անում, որ բյուջետային իրավունքի բնագավառում²⁴, իսկ Ա.Գ.Բրատկոն՝ որ բանկային իրավունքում մեղքի հատկանիշը՝ որպես պատասխանատվության հիմք, նշանակություն չունի²⁵:

Գ.Լ.Կոմյազինը նշում է. «Օրինակ, անհրաժեշտություն չկա բյուջեի միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում մեղքը ապացուցելու: Ինքնին բյուջեի միջոցների ոչ իրավաչափ օգտագործումը ենթադրում է գիտակցված գործողություն...»²⁶:

Իրավախախտման հաջորդ հատկանիշը դրա պատժելիությունն է:

Գժվար է համաձայնել այն հեղինակների կարծիքին, ովքեր պատժելիությունը չեն առանձնացնում որպես ֆինանսական իրավախախտման հատկանիշ²⁷: Մեր կարծիքով, արարքի պատժելիության հատկանիշը ֆինանսաիրավական պատասխանատվության ինստիտուտի կողմից իր գործառույթների կատարման հարցում այն կարևորագույն չափանիշներից մեկն է, որը իրավախախտին զսպում է և զերծ է պահում առավել վտանգավոր հակաիրավական արարքներից:

Որոշ հեղինակների կարծիքով ֆինանսաիրավական իրավախախտման կարևորագույն հատկանիշ է հանրային վտանգավորությունը:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի տեսակետ, համաձայն որի՝ արարքի հանրային վտանգավորությունը բնորոշ է միայն հանցագործությանը, իսկ մնացած իրավախախտումներին բնորոշ է միայն վնաս հասցնելը: Միաժամանակ, որոշ հեղինակներ կարծում են, որ ֆինանսական իրավախախտման հատկանիշներում հանրային վտանգավորության բացակայությունը հնարավորություն է տալիս դրանք տարանջատել հանցագործություններից:

Որոշ հեղինակներ էլ կարծում են, որ հակիրավական բոլոր արարքներին բնորոշ է որոշակի հանրային վտանգավորություն, և միմյանցից դրանք տարբերվում են այդ վտանգավորության աստիճանով²⁸: Մենք ևս կարծում ենք, որ ֆինանսական իրավախախտումը և հանցագործությունը տարանջատող միակ հատկանիշը կարող է լինել հանրային վտանգավորության աստիճանը, որը, իհարկե, տարբեր է տվյալ իրավախախտումների դեպքում:

Հետաքրքրական է, որ օրենսդիրը իր ձևակերպումներում նշանակություն չի տալիս ֆինանսա-

կան բնույթի իրավախախտման այնպիսի հատկանիշին, ինչպիսին է դրա հանրային վտանգավորությունը:

Միաժամանակ, մեր կողմից դիտարկված հատկանիշները ընդհանուր առմամբ թույլ են տալիս սահմանազատել վարչական զանցանքները ֆինանսական իրավախախտումներից և ֆինանսական ոլորտում այլ բոլոր տեսակի իրավախախտումներից:

Այսպիսով, ֆինանսական իրավախախտման հատկանիշների և տարրերի դիտարկումն ու վերլուծությունը թույլ են տալիս մեզ ընդգծել այն՝ որպես իրավախախտումների հատուկ տեսակ, որն իրենից ներկայացնում է պետության ֆինանսական գործունեության ոլորտում առաջացող և կոլեկտիվ կամ անհատ սուբյեկտի կողմից կատարվող մեղավոր, հակահրավական արարք, որի համար օրենքով սահմանվում են ֆինանսական պատասխանատվության միջոցներ:

¹ Տե՛ս Репецкий В.Н. К вопросу об ответственности по советскому финансовому праву// Вопросы совершенствования правового регулирования, Львов, 1982, С. 39.

² Տե՛ս Арсланбекова А.З. Налоговые санкции в системе мер финансово-правовой ответственности: Автореф. дисс... канд.юрид.наук, Саратов, 2001, С. 13.

³ Տե՛ս Гусева Т.А. За налоговые правонарушения административная ответственность?// Финансы, 2001, N12, С. 40, Зуев В.М., Финансовое право РФ. С. 174.

⁴ Տե՛ս Гончаров А.В. Административная ответственность за правонарушения в сфере налогообложения: дисс...к.ю.н.-Хабаровск, 2000, С. 13-20; Макаров Д.Г. Административно-правовая ответственность за налоговые правонарушения //Налоговый вестник, 2000, N3 С. 120-122; Осипов С.К. Государственно-правовые основы валютного регулирования и валютного контроля: дис...к.ю.н.-М., 2000, С. 136-145, 168.

⁵ Տե՛ս Додин Е.В. Основания юридической ответственности, Автореф. Дисс. к.ю.н.-М. 1965, С. 15.

⁶ Տե՛ս Карасева В.М. Финансовое право. Общая часть, М., 2000, С. 183.

⁷ Տե՛ս Емельянов А.С., Черногор Н.Н. Финансово-правовая ответственность, М., 2004, С. 149.

⁸ Տե՛ս Лейст О.Э. Санкции в советском праве, С. 62.

⁹ Տե՛ս Теория государства и права: Курс лекций, под ред. Н.И.Матузова, А.В.Малько, М., 2006, С. 583.

¹⁰ Տե՛ս Лейст О.Э. Санкции и ответственность по советскому праву (теоретические проблемы) М., 1981, С. 26.

¹¹ Տե՛ս Кудрявцев В.Н. Право и поведение, М. 1978, С. 41.

¹² Տե՛ս Тузов Д.О. Теория недействительности сделок: опыт российского права в контексте европейской правовой традиции.-М.: Статут, 2007, С. 54.

¹³ Տե՛ս Фарушкин М.Х. Вопросы общей теории юридической ответственности// Правоведение. 1969, N3 С. 25-30, ինչպես նաև Бахрах Д.Н. Административная ответственность, Пермь, 1966, С. 10-15.

¹⁴ Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в 3-х томах, отв.ред.проф. М.И.Марченко, Том 3, М., 2002, С. 456.

- ¹⁵ Տի՛ւ Շվարц Х.И. Обязательства из причинения вреда, М. 1954, С. 8.
¹⁶ Տի՛ւ Иоффе О.С. Обязательства по возмещению, Л., 1952, С. 15.
¹⁷ Տի՛ւ Яковлев В.Ф. Гражданско-правовой метод регулирования общественных отношений, М., 2006, С. 155-156.
¹⁸ Տի՛ւ Сырых В.М. Теория государства и права: Учебник для вузов. М. 2006 С. 385.
¹⁹ Տի՛ւ Кучеров И.И. Налоговое право зарубежных стран. Курс лекций М., 2003, С. 290.
²⁰ Տի՛ւ Кучерявенко Н.П. Курс налогового права, в 6 т., том 3, Учение о налоге, Харьков, 2005, С. 559.
²¹ Տի՛ւ Якушкина Е.Е. Принудительное исполнение обязанности по уплате налога налогоплательщиком-организациям, дисс. канд. юрид. наук, Воронеж 2006, С. 84.
²² Տի՛ւ Хмелевской И.Н. Правовые аспекты ответственности за риск. В сб.: Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 3. В трех томах. Том 1, М., 2003, С. 353.
²³ Տի՛ւ Сердюкова Н.В. Финансо-правовая ответственность по российскому законодательству: становление и развитие: Дисс... канд. юрид. наук. Томск, 2003, С. 89-90.
²⁴ Տի՛ւ Емельянов А.С. Финансовое право России, учебное пособие, 2002, С. 123.
²⁵ Տի՛ւ Братко А.Т. Банковское право, М., 2003, С. 60.
²⁶ Տի՛ւ Комягин Д.Л. Основания для применения бюджетного законодательства и правонарушения в банковской сфере // Финансовое право, 2007, N2, С. 30.
²⁷ Տի՛ւ Зуев В.М. Финансовое право РФ: Теория общей части.-Томск: Изд-во НТЛ., 2000, С.175-176.
²⁸ Տի՛ւ Аганов А.В. Административная ответственность: учебник –М., 2000, С. 30; Административное право: учебник /под. ред. Л.Л.Попова-2-е изд. перераб. и доп., С. 152, Барбат А.В., Закидов Б.Д. Состав преступления как основание уголовной ответственности//Консультант Плюс, 2005, С. 17.

Анна Торосян

Аспирант академии государственного
управления Республики Армения

РЕЗЮМЕ

Признаки финансового правонарушения и его особенности (общий теоретический анализ)

В статье изучается сущность финансовых правонарушений и их особенностей, а также в результате общих теоретических концепций и на основе определенных анализов сделана попытка выявить признаки, различающие финансовые правонарушения от других видов правонарушений.

Ключевые слова: правонарушение, финансовое, противоправное, признак, виновное, санкция.

Anna Torosyan

Post-graduate Student of the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

Signs of financial crime and its features (general theoretical analysis)

This article examines the nature of financial offenses and their characteristics, as well as from the general theoretical concepts and on the basis of specific analyzes attempted to identify signs distinguishing financial crime from other types of offenses.

Keywords: infraction, financial, illegal, sign, guilty, sanction.